կարգի գլխաւորի բնակութեան վայրը համարւում է Գեզօլան. Լուիս Մարտէնի մօտ կան 5 լեյտենանտներ՝ իւրաքանչիւրը մի մի եւրոպական մեծ ազգութիւնից։

—Աւստրիայից տեղեկութիւն են տալիս կաթոլիկների երկու ժողովների մասին, որոնց հետ միաժամանակ եղել են և երկու հակակղերական ժողովներ. Զը նայելով կղերականների մեծ ջանքերին, այնուամենայնիւ հակակղերականների ժողովները աւելի բազմամարդ էին. Նոցանից մէկի մէջ ներկայ են եղել 50.000 մարդ։ Կղերականների ժողովներում խօսող ճառախօսներից աչքի է ընկնում հայր Շակլէյտերը, որ առանձին ուշադրութեան արժանի էր համարում վերջին ժամանակներս զօրացող հակակղերական «Անջատումն Հռոմից» նշանաբանով շարժումը. միւս ճառախօսներն եւս շատ եռանդով ի զէն էին հրաւիրում բոլոր ճշմարիտ քրիստոնեաներին ընդդէմ այդ շարժման. Հակակղերականների ժողովներում ազատամիտ հռետորները ցոյց տալով կղերականների հակագերմանական ուղղութիւնը՝ համոզում էին, երբեք ոչ մի զիջումով հաշտութիւն չանել նոցա հետ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԻՖԼԻԶՈՒՄ

Նորին Սրբութիւնը Սեպտ. 19-ին, եր. ժամը 4-ին, Երեւանի վրայով ճանապարհ ընկաւ դէպի Թիֆլիզ, ուր ժամանեց կիւրակէ Սեպտ. 23-ին երեկոյեան դէմ Կարսի երկաթուղով։ Վեհափառ Հայրապետի հետեւորդների թիւը ճանապարհին հետզհետէ աւելանալով՝ Թիֆլիզ մտնելիս ուղեկցում էին Տ. Տ. Անանիա, Սահակ Այվազեան, Յուսիկ և Սարգիս եպիսկոպոսները, Տ. Կորիւն վ., և Տ. Մեսրոպ վ. իբրև թարգման։

Նոյն օրը, Սեպտ. 23-ին երեկոյեան, Ն. Սրբութեանը այցելութիւն եկաւ Թիֆլիզի նահանգի Վրաց ազնուականութեան պարագլուխ իշխան Դ. Զ. Մելիքովը։ Հետեւեալ օրը, ճաշուայ ժամը 3-ին, Ն. Վեհափառութեանը այցելեց Թիֆլիզի նահանգապետի պաշտօնակատար գնդ. Ի. Ն. Սվեչինը, իսկ սեպտ. 25-ին Կովկասի Ուսումն. շրջանի հոգաբարձու պ. Զաւադսկին։

Այս սեպտ. 26-ին, առաւօտեան ժամը 10-ին, Ն. Սրբութիւնը այցելեց Կովկասի նախկին փոխարքայ՝ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսեր կողմից Վրաստանի Ռուսաց Պետութեան հետ միանալու հարիւրամեակի հանդէսներին ներկայացուցիչ և նախագահող կարգուած Ն. Կ. Բ. Մեծ իշխան Միխայէլ Նիկոլայեւչին և Յունաց թագուհի Օգոստափառ Օլգա Կոստանդինովնային։ Սեպտ. 28-ին, առաւօտեան ժ. 10-ին, Ն. Կ. Բ. Միխայիլ Նիկոլաեւիչ և Գէորգի Միխայիլովիչ փոխ-այցելութեան եկան Ն. Սրբութեան մօտ։ Այցը տեւեց 20 րոպէ, որից յետոյ Բրձ. իշխանները դիտեցին վանքի աւագ եկեղեցու բակում թաղուած հայազգի անուանի զօրավարների՝ Լօրիս—Մելիքեանի, Ալխազեանի, Լազարեանի, Տէր Ղուկասեանի, Շելկովնիկեանի, Քիշմիշեանի և այլոց գերեզմանները։ Նոյն օրը Թիֆլիզի ժողովարանում ի պատիւ Օգոստափառ Հիւրերի տրուած էր նախաճաշ. ներկայ էին Մեծ. իշխ. Միխայէլ Նիկոլայեւիչ, Գէորգի Միխայէլովիչ, Յունաց թագուհի Օլգա Կոստանդինովնա, Կառավարչապետ իշխ. Գոլիցին, Մեծ. իշխ. Գ. Ելենա Վլադիմիրովնա, Մարիա Գէորգիեւնա, Մեծ. իշխ. Նիկոլայ Միխայէլովիչ, յունական արքայորդի Անդրէյ, Կառավարչապետի օգնական գեն. Ֆրէզէ եւլն։ Ն. Ս. Օծութիւն Ազգիս Վեհ. Հայրապետը, իւր շքախմբով, հրաւիրուած էր այդ նախաճաշին, և ներկայ գտնուեցաւ, ինչպէս Վրաստանի և Իմերէթի էկզարխ Ֆլաւիան և ուրիշ բարձրաստիճան հիւրեր ու հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Սեպտ. 29-ին, շաբաթ երեկոյեան, Ն. Սրբութեան Օծման Ը. տարեդարձի առթիւ նախատօնակ կատարուեցաւ Մողնու ս. Գէորգ եկեղեցում, ուր և իջաւ Ն. Վեհափառութիւնը։ Հետեւեալ օրը Գեր. Անանիա եպ. հանդիսաւոր պատարագ մատոյց, որին ներկայ էր Ն. Սրբութիւնը՝ եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների դասի հետ։ Պատա-

բաղիշ սրբազանը քարոզ խօսեց Ն. Սրբութեան ոտնի առթիւ. իսկ պատարագիչ յետոյ Ն. Վեհափառութիւնը վեհարան գնաց, որտեղից ապա իջաւ վանքի աւագ եկեղեցու գաւիթը, և այդտեղ կատարուեցաւ հայրապետական մաղթանք՝ ժողովրդի սառաբ բարմութեան ներկայութեամբ: Մաղթանքից յետոյ Ն. Սրբութեան մօտ այցելութեան էին գալիս մինչև երեկոյեան ժ. 5-ը հայ հոգևորականութիւնը և զանազան բարձրաստիճան անձինք: Նոյն օրը երեկոյեան Ներսիսեան Դպրանոցում Վեհ. Հայրապետի օծման տարեդարձի առթիւ տեղի ունեցաւ գրական երեկոյթ, որ նուիրուած էր ամբողջովին ծերունազարդ Հայրապետի գրական գործունէութեանը:

Հոկտ. 12-ին, առաւօտեան ժ. 11-ին, Ն. Վեհափառութիւնը հաճեցաւ այցելել Կովկասեան ցուցահանդէսը, ուղեկցութեամբ Գեր. Ս. եպ. Այվազեանի և Տ. Տ. Գարեգինի, Արսէնի, Կորիւնի, Մատթէի և Մատթէոս վարդապետների: Ն. Սրբութեանը դիմաւորեցին ցուցահանդէսը կազմակերպող մասնաժողովի նախագահ Սուլթան—Կրիմ—Գիրէյ, ցուցահանդէսի կոմիսար իշխ. Ի. Անդրոնիկով և զանազան բաժինների ներկայացուցիչներ: Ն. Սրբութիւնը իջաւ յատուկ առանձնասենեակում, ուր իշխանուհի Անդրոնիկովա սուրճ մատոյց Նորին Վեհափառութեանը: Սուրճ ընդունելուց յետոյ Վեհ. Հայրապետը բարեհաճեց նայել ցուցահանդէսի մեքենաների բաժինները, որի ժամանակ երկար կանգ առաւ Խան-Ագանի և Տէր-Զաքարեանի մեքենաների առաջ: Ապա Ն. Սրբութիւնը նայեց պառուզների և անայնագործութեան բաժինները, ուր և երկար խօսակցեց շրջապատողների հետ: Ն. Սրբութեան ուշադրութիւնը գրաւեց առանձնապէս մանկավարժական բաժնում կոյր աշակերտների կարդալ—գրելը, որոնց օրհնեց և ցուցահանդէսի միւս բաժինները նայելուց յետոյ ցերեկուայ ժ. 1-ին ուղևորուեցաւ վեհարան գոհ սրտով:

Հոկտ. 16-ին առաւօտեան ժ. 10-ին Ն. Վեհափառութիւնը այցելեց Կովկասի Կառավարչապետ գեն. ադիւտ. իշխ. Գալիցինին, որի մօտ մնաց մէկ ժամ: Ապա Ն. Վեհափառութիւնը այցելեց կառավարչապետի օգն. գեն. լեյտ. Ցրեգլին, Թիֆլիսի Վրաց ազնուականութեան պարագլուխ իշխ. Մելիքովին և Թիֆլիսի նահանգապետ Սիմչինին, և 12½ ժամին վերադարձաւ վեհարան հանգստանալու: Հետեւեալ օրը, հոկտ. 17-ին, իշխ. Գալիցին փոխ—այցելութեան եկաւ Ն. Սրբութեանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սինոդի անդամ Բարձր. Բագարատ վարդապետ Դ. Թաւաբաշեանի հետ օգոստոսի վերջերին Մ. Աթոռ էր եկել Տ. Գէորգ վարդ. Նալբանդեանց, որ Աղթամարի միաբաններից լինելով՝ վերջին մի քանի տարին պաշտօն է վարել Բուլղարիայում և Ֆրանսերէն սովորելը ինքնակրթութեամբ յառաջացել: Տ. Գէորգ վարդապետ Արտաշատ ս. Թադէոս առաքելոյ վանքի վանահայր կարգուեցաւ և սեպտեմբեր ամսին ուղևորուեցաւ դէպի Պարսկաստան, իւր պաշտօնատեղին:

Դրեթէ միաժամանակ ս. Էջմիածնում էր նաև Սեբաստացի Տրիփոն վարդապետ, որ նշանակուեցաւ Մարաբեռ ս. Սահականոս նախավկայի վանքի վանահայր. իսկ նախկին վանահայր Տ. Աբրահամ վարդապետ Ռշտունի յետ կանչուեցաւ Մ. Աթոռ:

Խաչվերացի տօնին Մ. Աթոռում հիւր էր Բագուեցի յայտնի վաճառական պ. Համբարձում Մելիքեան, որ իւր ընկերակիցների կողմից յանձնարարութիւն ունէր՝ Վեհափառ Հայրապետի հաճութիւնն առնելու և անօրէնութիւնը խնդրելու, որպէս զի Նորին Սրբութեան Բագու քաղաքն այցելելու առթիւ ժողովուած գումարը մի նոր վեհարանի շինութեան համար գործադրուի: Վեհափառ Հայրապետի հրամանով մի կարգադրիչ յանձնաժողով կազմուեցաւ՝ նախագահութեամբ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոսի և անդամակցութեամբ Գեր. Յովհաննէս եպիսկոպոսի, Տ. Մխիթար, Տ. Կարապետ, Տ. Եղիշէ Ա.հարոնեան վարդապետների և պ. Գայուսա Տ. Մկրտչեանի, որ պ. Մելիքեանի հետ կարևոր խորհրդ-